ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1079-20.05.2025-ՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է սահմանել Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում հերթական տարեկան հաղորդումը ներկայացվելուց հետո մինչև հրաժարականի դիմում ներկայացնելն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին ամփոփ հաղորդման ներկայացման ընթացակարգեր և ժամկետներ:	Առաջարկը չի ընդունվել:	
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է Պաշտպանին փոխարինող պաշտոնատար անձին ընձեռել նաև պաշտոնի վերանշանակելու լիազորություն:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան հոդվածը խմբագրվել է:	Առաջարկն ընդունվել է:

3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվում է սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածը լրացնել նոր 4.1-ին մասով, համաձայն որի՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրավասու է ներկայացնելու հատուկ կարծիք (amicus brief) սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Իրավական որոշակիության սկզբունքից ելնելով առաջարկվում խմբագրել «հատուկ կարծիք» ձևակերպումը:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան հոդվածը խմբագրվել է:	Առաջարկն ընդունվել է:
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 11-րդ հոդված	Եթե նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 8.1-ին կետի հիման վրա դեռևս չի ընդունվել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը, ապա առաջարկում ենք նախագծով նախատեսել անցումային դրույթ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը: Նաև առաջարկվում է սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 8.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «8.1) սահմանում է Պաշտպանի աշխատակազմում էթիկայի հանձնաժողովի ձևավորման կարգը և էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, հաստատում է էթիկայի հանձնաժողովի կազմը.»:	1-ին առաջարկի վերաբերյալ առկա է 2021 թվականի մարտի 2-ի 24-Ա հրաման: 2-րդ առաջարկն ընդունվել է: Համապատասխան հոդվածը խմբագրվել է:	Առաջարկն ընդունվել է: